

ՀԱՂԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՍԵՄԱԿԱՆ ԵՐԿԱՐԲԱՌՆԵՐԻ
ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Հնդեվրոպական լեզուների տվյալները վկայում են, որ նախալեզվի *eu, *ou, *au, *ei, *oi, *ai երկհնչույթային երկբարբառների ոչ վանկարար *u-ն և *i-ն հնչյունական-արտասանական տեսանկյունից սկզբնապես ավելի հարել են *y և *j կիսաձայններին, քան u և i ձայնավորներին: Դա ակնհայտ երևում է հետևյալ հանգամանքից:

Հայտնի է, որ հ.-ե. *r, *l, *m, *n ձայնորդները երկգործառույթ են եղել բաղաձայնների հարևանությամբ (այն է՝ բառամիջում՝ բաղաձայնների միջև, բառավերջում՝ բաղաձայնից հետո, և բառասկզբում՝ բաղաձայնից առաջ) հանդես են եկել վանկարար արժեքով, իսկ ձայնավորների հարևանությամբ (ձայնավորների միջև, ձայնավորից առաջ կամ հետո) դրսևորվել են որպես բաղաձայն ձայնորդներ: Այսպես, հ.-ե. *kmtom «հարյուր» բառի (հմմտ. լատ. centum, հն. ἑκατόν, գոթ. hund, հ. հնդ. śatām, լիտ. šimtas «հարյուր») առաջին վանկի ք-ն բաղաձայնների միջև վանկարար հնչյուն է եղել և որպես այդպիսին՝ դարձել է լատ. em (< em), հն. և հ. հնդ. a, գոթ. am, լիտ. im, մինչդեռ բառավերջի m-ն 0 ձայնավորի հարևանությամբ բաղաձայն ձայնորդ է ներկայացրել: Նմանապես, ք-ն վանկարար է եղել հ.-ե. *dekmp «տասը» (հմմտ. լատ. decem, հն. δεκά, հ. հնդ. daśa, գոթ. taihun և այլն) բառի դեպքում բառավերջում՝ բաղաձայնից հետո¹:

Արդ, եթե նկատի ունենանք, որ հ.-ե. երկբարբառներին հաջորդող *r, *l, *m, *n ձայնորդները նույնպես վանկարար արժեք են ունեցել, ապա դրանից կարելի է հետևեցնել, որ ձայնավորի (*e, *o, *a) և ձայնորդի (*r, *l, *m, *n) միջև հ.-ե. *y և *j կիսաձայնները բաղաձայններ են եղել, այսպես ձայնավորին (թեկուզ և՛ ոչ վանկարար) հաջորդող *r, *l, *m, *n ձայնորդները չէին կարող վանկարար արժեք ձեռք բերել: Այսպես, հ. հնդ. náva, լատ. novem, գոթ. niun (< *newun), հն. ἐννέ(ε)α «ինը» նշանակությամբ բառերը ակնհայտորեն ենթադրում են հ.-ե. *newun(newn) նախաձև², որի դեպքում, ինչպես տեսնում ենք, *e-ի և *n-ի միջև *y(w) կիսաձայնը բաղաձայնային արժեք է ունեցել, ուստի *y(w)-ին հաջորդող *n ձայնորդը

¹ Տե՛ս J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch, Bd. 1. Bern and München, 1959, S. 191-192.

² Տե՛ս A. Мейе. Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.-Л., 1938, с. 157; O. Szemerényi. Einführung in die vergleichende Sprachwissenschaft. Darmstadt, 1980, S. 206.

վանկարար արժեք է ձեռք բերել ճիշտ նույն կերպ, ինչպես, օրինակ, *dekṃ բառի դեպքում՝ *K բաղաձայնից հետո: Իսկ Հ. Հնդկ. navati «իննսուն», Հ. պրուս. newīnts «իններորդ», գոթ. niunda (< *newunda) «իններորդ» ձևերը ենթադրում են Հ.-ե. *newūt-(*newūt-) նախաձև³, որում *Ո ձայնորդը վանկարար (ք) արժեք է ձեռք բերել բաղաձայնների (այն է՝ *w(ǵ)-ի և *t-ի) միջև ճիշտ նույն կերպ, ինչպես վերը բերված *kmtom բառի դեպքում՝ K և t բաղաձայնների միջև: Ի դեպ, նույն բանը Հաստատվում է նաև քերականական ձևերի պարագայում: Օրինակ, Հ. Հնդ. a-śravam «լսեցի» և a-śrō-տ «լսեց» արմատական աթեմատիկ աորիստի ձևերը Համապատասխանաբար ծագում են Հ.-ե. *klew-ը և *kleu-տ նախաձևերից⁴: Ըստ այդմ՝ Հ.-ե. *kleu- «լսել» արամատական հիմքը իսկական (բուն) բաղաձայնից առաջ (Հ.-ե. տեսանկյունից բուն բաղաձայններ են *r, *l, *m, *n ձայնորդներից և *ɣ(y), *w(w) կիսաձայններից բացի մյուս բոլոր բաղաձայնները) պարունակել է eu երկբարբառ (Հ. Հնդ. ɔ < Հ.-ե. *eu), մինչդեռ *m ձայնորդից առաջ *eu-ն դրսևորվել է որպես eɥ(ew) ձայնավոր + կիսաձայն կապակցություն (Հ. Հնդ. av < Հ.-ե. *ew), որին Հաջորդող m-ն վանկարար արժեք է ձեռք բերել՝ m > ք:

Նմանապես, Հ.-ե. *nāu- արմատական հիմքից ծագող Հն. vñs (Հոմ. և իոն.) «նավ» բառի եզ. Հայց. vñα (Հոմ.), vεā (իոն.) ձևերը ենթադրում են Հնագույն Հն. *vāfα⁵, որի բառավերջի α-ն Հ. Հնդ. եզ. Հայց. nāvam ձևի am-ի a-ի հետ, անշուշտ, ծագում է Հ.-ե. վանկարար *ք-ից՝ *nāw-ը (*nāu-ը) նախաձևից⁶, այսինքն՝ Հ.-ե. եզ. Հայց. *m վերջավորությունից, որը աթեմատիկ Հոլովման ժամանակ հետբաղաձայնային դիրքում դրսևորվում էր որպես վանկարար ք (Հմմտ. *ped-ը/*pod-ը «ոտք» – եզ. Հայց. > լատ. pedem, Հն. ποδα, Հ. Հնդ. padam):

Ուստի, եթե նույնիսկ ընդունենք, որ Հ. Հնդ. nauh, Հն. vñs (Հոմ. և իոն.) «նավ» բառերի նախաձևը երբևէ եղել է *nah-us – եզ. ուղղ., *nahum – եզ. Հայց. և այլն⁷, կարծում ենք, Հիշյալ նախաձևերը ենթադրելի են, թերևս, Հ.-ե. վաղ շրջանի Համար, բայց Հ.-ե. ուշ շրջանում *ahu- Հնչյունակապակցությունն արդեն պետք է դարձած լիներ *āu երկբարբառ, որն էլ Հայցականի *m վերջավորությունից առաջ կարող էր վերածվել *āw(āu) ձայնավոր + կիսաձայն կապակցության, իսկ Հաջորդող ք-ն՝ վանկարար արժեք ձեռք բերել՝ *nāus – եզ. ուղղ., *nāum(*nāwm) – եզ. Հայց. և այլն: Այլապես, *nahu- ձևի *u ձայնավորին Հաջորդող *m-ն կպահպանվեր բաղաձայնային արժեքով (Հմմտ. Հ.-ե. *u հիմքով բառերի եզակի Հայցական Հոլովաձևը, օրինակ՝ Հ.-ե. *bhāghu-m > Հն. πῆχυς, Հ. Հնդ. bāhum «ձեռք»

³ Sb' u A. Meñe. Նշվ. աշխ., էջ 157:

⁴ Sb' u O. Szemerényi. Նշվ. աշխ., էջ 261:

⁵ Sb' u A. Meñe. Նշվ. աշխ., էջ 315:

⁶ Sb' u V. Henry. Précis de grammaire comparée du grec et du latin. Paris, 1894, p. 247.

⁷ Sb' u O. Szemerényi. Նշվ. աշխ., 165:

և այլն), որը, բնականաբար, չէր կարող տալ Հն. *α* և Հ. Հնդ. *am* (< Հնդերթ. **a*):

Այդպես էլ, ցեղակից լեզուների տվյալները վկայում են այն մասին, որ Հ.-ե. թեմատիկ խոնարհման ըղձական եղանակի **oi*-ը (թեմատիկ **o* ձայնավոր + **i* ըղձականի ցուցիչ) եզ. I դ. **m* վերջավորութունից առաջ դրսևորվել է որպես **o*լ(*oy*) ձայնավոր + կիսաձայն կապակցութուն, որին Հաջորդող **m*-ն վանկարար արժեք է ձեռք բերել, մինչդեռ, ասենք, եզ. II դ. *s* և Հոգ. I դ. *me* վերջավորութուններից առաջ այն Հանդես է գալիս որպես **oi* երկբարբառ. Հմմտ. **bherō* «բերել» բայից՝ **bheroy*α – ըղձ. եզ. I դ., **bherois* – ըղձ. եզ. II դ., **bheroime* – ըղձ. Հոգ. I դ.⁸:

Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ Հ.-ե. **i* և **u* ձայնավորներին Հաջորդող **r*, **l*, **m*, **n* ձայնորդները բաղաձայններ են եղել (Հմմտ. Հն. πῆχυν, Հ. Հնդ. *bāhum* < Հ.-ե. **bhāghum*), մինչդեռ երկբարբառի ոչ վանկարար **i*-ին և **u*-ին Հաջորդող ձայնորդները վանկարար արժեք են ձեռք բերել ճիշտ նույն կերպ, ինչպես առհասարակ *l*(*y*) և *u*(*w*) կիսաձայններից Հետո [Հմմտ. մի կողմից՝ վերը բերված Հ.-ե. **newaritis* > Հ. Հնդ. *navatih*; մյուս կողմից՝ Հ.-ե. **kwarbhis* > Հ. Հնդ. *śvabhīh* (և ոչ թե **śumbhīh*) «չնեբրով» – Հոգ. գործ.], ապա Հաստատապես կարող ենք ասել, որ Հ.-ե. **eu*, **ou*, **au*, **ei*, **oi*, **ai* երկբարբառների ոչ վանկարար **u*-ն և **i*-ն Հնչյունական-արտասանական տեսանկյունից, իրոք, Համապատասխանել են **u* և **i* կիսաձայններին (երկու դեպքում էլ դրանց Հաջորդող ձայնորդները վանկարար արժեք են ձեռք բերել):

Ըստ այդմ՝ վերը կատարված քննութունը ցույց է տալիս, որ Հ.-ե. **u* և **i* կիսաձայնները բառամիջում՝ ձայնավորի ու բաղաձայնի միջև, որպես երկբարբառի ոչ վանկարար տարր դրսևորվել են միայն այն դեպքում, եթե կիսաձայնին Հաջորդելիս է եղել Հ.-ե. որևէ բուն բաղաձայն կամ ձայնորդ + ձայնավոր կապակցութուն, այլ կերպ ասած՝ եթե Հաջորդող բաղաձայն Հնչյունի՝ վանկարար արժեք ձեռք բերելու Հնարավորութունը բացառված է եղել: Այդ առումով շատ տիպական է, օրինակ, **r* ձայնորդի Հետագա երկակի զարգացումը Հ.-ե. նույն արմատից ծագող գրբ. նեարդ և Հն. νευρά «պարան, լար, նյարդ» բառերի դեպքում: Հայերեն ձևը գալիս է Հ.-ե. **sneu*- «թելեր ոլորել, հյուսել» արմատից կազմված **sneurt*- նախաձևից⁹, որտեղ **r*-ն վանկարար է եղել, իսկ վերջինիս նախորդող **u*-ն՝ բաղաձայն: Մինչդեռ Հ.-ե. նույն արմատից կազմված Հունարեն ձևի նախաձևում **r*-ն իրեն Հաջորդող ձայնավորի պատճառով զրկված է եղել վանկարար դառնալու Հնարավորութունից, և Հենց դրա շնորհիվ էլ **r* բաղաձայնին նախորդող **u*-ն դրսևորվել է որպես երկբարբառի ոչ վանկարար տարր:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 241:

⁹ Տե՛ս Գ. Բ. Զ ա Հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմութուն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 149:

Ասվածք թույլ է տալիս ենթադրելու, որ Հ.-ե. երկբարբառների ոչ վանկարար *ս և *ի բաղադրիչները նախապես ճայնավորային արժեք (այն է՝ ոչ վանկարար սուղ ճայնավորի արտասանություն) չեն ունեցել, այլապես, ոչ վանկարար *ի և *ս ճայնավորներին հաջորդող ճայնորդները կպահպանվեին որպես բաղաճայններ: Հետևաբար, Հ.-ե. երկբարբառները սկզբնապես շառիս բուն իմաստով երկբարբառներ չեն եղել: Բայց մյուս կողմից հայտնի է, որ Հ.-ե. երկբարբառները ցեղակից բոլոր լեզուներում սկզբից և եթ դրսևորվել են որպես երկբարբառներ՝ մենաբարբառացման միտումով: Ուստի այդ ամենը նկատի ունենալով՝ հակված ենք կարծելու, որ Հ.-ե. երկբարբառների ոչ վանկարար *ս-ն և *ի-ն սկզբնական շրջանում հնչյունական-արտասանական տեսանկյունից համապատասխանել են $W(y)$ և $Y(y)$ կիսաճայններին, որն էլ հնարավորություն է տվել հաջորդող ճայնորդներին՝ հանդես գալու վանկարար արժեքով: Իսկ ավելի ուշ (բայց, անշուշտ, դեռևս Հ.-ե. միասնություն շրջանում) բուն բաղաճայններին և ճայնորդ + ճայնավոր կապակցություններին նախորդող *ս-ն և *ի-ն վերածվել են ոչ վանկարար սուղ ս և ի ճայնավորների, որոնք նախորդող վանկարար Ե, Օ, Զ ճայնավորների հետ իրական երկհնչույթային երկբարբառներ են կազմել, մինչդեռ վանկարար ճայնորդներին նախորդող *ս-ն և *ի-ն շարունակել են պահպանվել բաղաճայնային արժեքով:

Այդպես էլ, սեմական լեզուների տվյալները, մի կողմից, վկայում են, որ սեմ. *չ և *ք կիսաճայնները ճայնավորի ու բաղաճայնի միջև գործառել են բաղաճայնային արժեքով, մյուս կողմից՝ սեմական լեզուներում ընդ. սեմ. *չ և *ք հնչյունակապակցությունների պարզեցումը ($\text{չ} > \text{ē}$, $\text{ք} > \text{ō}$) ցույց է տալիս, որ չ և ք հնչյունակապակցությունները նախքան պարզ ճայնավորի վերածվելը երկբարբառային արտասանություն են ձևք բերել:

Հայտնի է, որ վանկր սեմական վանկակազմությունների օրինաչափությունների համաճայն չի կարող ավարտվել (ինչպես նաև՝ սկսվել) երկու բաղաճայնով: Ուստի քերականական ձևերի կազմության ժամանակ բառավերջում առաջացող բաղաճայնային կապակցությունը սովորաբար վերացվում է բաղաճայնների միջև օժանդակ ճայնավոր ավելացնելու միջոցով:

Այսպես, աքքադերենում իզաֆեթային կառույցի մեջ հատկացյալ գոյականը սեռական հոլովով դրված հատկացուցիչ գոյականից առաջ կորցնում է ուղղականի հոլովական վերջավորությունը՝ ձևք բերելով, այսպես կոչված, կապակցված դրություն (status constructus): Եվ եթե դրա հետևանքով բառավերջում առաջանում է երկբաղաճայնային կապակցություն, բաղաճայնների միջև ավելանում է մի օժանդակ ճայնավոր՝ արմատական ճայնավորի բնույթին համապատասխան. հմմտ. *alpum* «կով, ցուլ» – *alap* (< *alp-*) *awīlim* «մարդու կովը, ցուլը», *nikpum* «հարված» – *nikip* (< *nikp-*) *alvim* «կովի, ցուլի հարված», *bēltum* «տիրուհի, սեփականատիրուհի» – *bēlet* (< *bēlt-*) *bītim* «տան սեփականատիրուհի, տանտիրուհի» և այլն¹⁰:

¹⁰ *Séu* K. K. Riemenschneider. Lehrbuch des Akkadischen. Leipzig, 1973, S. 35–36.

Եբրայերենում ևս, որտեղ բառավերջի կարճ ձայնավորները հիմնականում ընկել են (ընդ որում՝ ոչ միայն բառերի կապակցված դրուժյան դեպքում), դարձյալ բառավերջի բաղաձայնների միջև օժանդակ ձայնավոր է ավելացել. հմմտ. *sifr > sefer «գիրք», *nafš > nefesh «հոգի», *malk > meleḥ «թագավոր» և այլն¹¹: Արդ, այն հանգամանքը, որ եբրայերենում սեմ. *baḫt- «տուն»*, *maḫt- «մահ» և այլ բառերի դեպքում չ, քի և հաջորդող բաղաձայնի միջև նույնպես օժանդակ ձայնավոր է առաջացել, օրինակ՝ *baḫt- > եբր. baḫit «տուն», *maḫt- > եբր. māḫet «մահ» և այլն¹², ակնհայտորեն ցույց է տալիս, որ ալ և ալ հնչյունակապակցությունների չ-ն և ք-ն գիտակցվել են որպես բաղաձայններ: Ու թեև *malk > meleḥ, *sifr > sefer և նման ձևերում բաղաձայնների միջև օժանդակ ձայնավորը համեմատաբար ավելի վաղ է առաջացել, քան ալ և ալ հնչյունակապակցությունների չ-ից և ք-ից հետո (*baḫt- > baḫit, *maḫt- > *maḫut > māḫet և այլն), այդուհանդերձ, թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում օժանդակ ձայնավորն ի հայտ է եկել հնչյունական նույն օրինաչափությամբ՝ վանկավերջի երկ-բաղաձայնային կապակցությունը վերացնելու պահանջով¹³: Նկատենք նաև, որ եբրայերենում ալ > aḫi, ալ > aḫu > āḫe հնչյունական զարգացումները բաղաձայնից առաջ տեղի են ունեցել միայն շեշտակիր փակ վանկում, իսկ շեշտակիր բաց վանկում, ինչպես նաև անշեշտ բաց ու փակ վանկերում ալ-ը և ալ-ը պարզեցման են ենթարկվել՝ ալ > ē, ալ > ǝ¹⁴: Եվ քանի որ տիպաբանական տեսանկյունից ai > ē և au > ǝ հնչյունական զարգացումները բնորոշ են ai և au երկբարբառներին, այդ նշանակում է, որ նախքան ալ > ē և ալ > ǝ փոփոխությունների տեղի ունենալը ալ և ալ ձայնավոր + կիսաձայն կապակցությունները երկբարբառային արժեք են ձեռք բերել՝ ալ > ai > ē, ալ > au > ǝ:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից նույնքան կարևոր են ասորերենի ընձեռած տվյալները: Ինչպես նշում է սեմագետ Բ. Գրանդեն, ասորերենում կան թուլացող երկբարբառներ՝ [aḫ], [aḫ], [āḫ], որոնք, սակայն, գիտակցվում են ոչ թե իբրև երկբարբառներ, այլ իբրև թույլ բաղաձայնով ավարտվող վանկեր: Այդ ակնհայտ երևում է այն բանից, որ, օրինակ, ասոր. maḫtā «մահ», baḫtā «տուն» և նման ձևերում ք-ից և չ-ից հետո t բաղաձայնը չի վերածվում շփականի (որը պետք է տեղի ունենար հետձայնավորային դիրքում), այլ պահպանվում է որպես պայթական, ինչպես որևէ բաղաձայնի հաջորդելու պարագայում¹⁵: Ի դեպ, ասորերենում ալ և

¹¹ S^t C. Steuernagel. Hebräische Grammatik. Leipzig, 1962, S. 25; Б. М. Гранде. Введение в сравнительное изучение семитских языков. М., 1972, с. 74–75.

¹² S^t C. Steuernagel. Նշվ. աշխ., էջ 25, Б. М. Гранде. Նշվ. աշխ., էջ 99–100:

¹³ S^t C. Brockelmann. Grundriss der vergleichenden Grammatik der semitischen Sprachen, Bd. 1, Laut- und Formenlehre. Berlin, 1908 (= Lieferungen 1–6, Berlin, 1907–1908), S. 216; Б. М. Гранде. Նշվ. աշխ., էջ 99–100.

¹⁴ S^t C. Brockelmann. Grundriss ..., S. 191–192; Б. М. Гранде. Նշվ. աշխ., էջ 99–100.

¹⁵ S^t Б. М. Гранде. Նշվ. աշխ., էջ 362.

ալ երկբարբառները պահպանվում են միայն բաց վանկում (mau-tā, bai-tā և այլն), մինչդեռ փակ վանկում $ալ > օ$, $ալ > օ$ պարզեցում է տեղի ունենում: Իսկ ավելի ուշ արևելյան ասորերենում $ալ > օ$ և $ալ > օ$ մենաբարբառացում է տեղի ունեցել նաև բաց վանկում, ինչպես՝ bēṭā «տուն», sōfā «վերջ, ավարտ» նախկին bai-tā և sau-pā ձևերի փոխարեն¹⁶: Ասվածից հետևում է, որ ասորերենում $ալ$ և $ալ$ Հնչյունակապակցությունները նախապես երկբարբառային արտասանություն են ձևաբ. բերել ($ալ > ai > օ$, $ալ > au > օ$) վանկավերջի երկբաղաձայնային կապակցությունը վերացնելու պահանջով, իսկ ավելի ուշ $լ$ և $վ$ կիսաձայնները նշված դիրքում երկբարբառի ոչ վանկաբար տարրի են վերածվել վանկակազմութայն օրինաչափություններից անկախ՝ բաց վանկում նույնպես, եթե, իհարկե, փակ վանկերում տեղի ունեցած $ալ > au > օ$, $ալ > ai > օ$ Հնչյունափոխությունները հետագայում համարանությունը չեն տարածվել նաև բաց վանկերի վրա:

Այն հանգամանքը, որ արաբերենի զանազան բարբառներում, ասենք՝ եգիպտական բարբառում, բառերի վերջավորությունների ձայնավորներն ընկել են, և, մյուս կողմից, տեղի են ունեցել $ալ > օ$ և $ալ > օ$ Հնչյունական զարգացումներ, ինչպես՝ bēt «տուն» (գր. արաբ. baitun), tōr «ցուլ» (գր. արաբ. tawrūn) և այլն¹⁷, առաջին հայացքից կարծես թե վկայում է, որ արաբ. բրբռ. $ալ > օ$ և $ալ > օ$ Հնչյունափոխությունները նույնպես պայմանավորված են եղել վանկավերջի երկբաղաձայնային կապակցությունը ($-lC$ և $-vC$) վերացնելու պահանջով, և ըստ այդմ՝ արաբ. $ալ$ և $ալ$ Հնչյունակապակցությունները պետք է դիտել ոչ թե որպես [ai] և [au] երկբարբառներ, այլ որպես ձայնավոր + բաղաձայն կապակցություններ՝ [aj/ay], [av/aw]: Սակայն իրականում այդպես չէ, և արաբ. $ալ$, $ալ$ Հնչյունակապակցությունները Հնչյունական տեսանկյունից ակնհայտորեն երկբարբառներ են ներկայացնում: Նկատենք, որ արաբական մի շարք երկրներում $ալ$ և $ալ$ Հնչյունակապակցությունները $ալ > օ$ և $ալ > օ$ պարզեցման են ենթարկվել նաև բառերի վերջավորությունների ձայնավորների առկայության պարագայում, այսինքն՝ տվյալ դեպքում $ալ$ -ը և $ալ$ -ը բառամիջում՝ մեկ բաղաձայնից առաջ, գտնվել են բաց վանկում, ինչպես, օրինակ՝ bētun «տուն» (գր. արաբ. baitun [=baitun]), χōfun «վախ» (գր. արաբ. χaufun [=χaufun]) և այլն¹⁸: Մյուս կողմից, արաբերեն խոսակցական լեզվում բառերի վերջավորությունների ձայնավորները, որպես կանոն, չեն արտասանվում, որի հետևանքով արաբերենում ունենք երկբաղաձայնային կապակցությամբ ավարտվող բաղաձայնի բառեր, օրինակ՝ qalb «սիրտ» (փոխ. qalbu), katabt «գրեցի» (փոխ. katabtu) և այլն¹⁹: Արդ, ինչպես տեսնում ենք, վանկավեր-

¹⁶ Տե՛ս նույն տեղում: Հմմտ. նաև՝ C. Brockelmann. Syrische Grammatik. Leipzig, 1965, S. 32–33.

¹⁷ Տե՛ս Б. М. Гранде. Ёзф. աշխ., էջ 99:

¹⁸ Տե՛ս R. Armeiz. Nouvelle grammaire arabe. Heidelberg, 1907, p.12.

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 24–25, նաև՝ E. Schulz, G. Krahl, W. Reuschel. Standard Arabic, An Elementary-Intermediate Course. Cambridge, 2005, p. 47.

ըի երկբաղաձայնային կապակցութիւնը օժանդակ ձայնավորի ավելացմամբ կամ որևէ այլ եղանակով տվյալ դեպքում չի վերացվում, այլ կերպ ասած՝ վանկակազմութեան հնագույն օրինաչափութիւնները արդեն խախտվել են: Հետևաբար, արաբ. բրբռ. *bēt* «տուն» (գր. արաբ. *bajtun*), *tōr* «ցուլ» (գր. արաբ. *ṭawrūt*) և նման ձևերում տեղի ունեցած *aj[ai] > ē, au[au]* > *ō* հնչյունական զարգացումները չեն կարող պայմանավորված լինել վանկավերջի երկբաղաձայնային կապակցութիւնը վերացնելու պահանջով, և, ըստ այդմ, չի կարող բաղաձայնային արժեք վերագրվել արաբ. *aj* և *au* հնչյունակապակցութիւնների չիւն և քիւն: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հետազոտողները արաբ. *aj*-ը և *au*-ը՝ որպէս երկբարբառներ, հնչյունական-արտասանական տեսանկյունից համեմատում են *θ*. անգլ. [*ai*] և [*au*] (Հմմտ. *write[raxt]* և *how[hau]*) երկբարբառների հետ²⁰: Տառադարձման եղանակը տվյալ դեպքում էական չէ: Անկախ այն բանից, թե արդէոք հիշյալ երկբարբառների ոչ վանկարար *i* և *u* տարրերի ու համապատասխան *ǰ* և *ǰ* կիսաձայնների արտասանական տարբերութիւնն արտացոլվում է տառադարձման դեպքում, ինչպես՝ *aj*, *au* և *j(ǰ)*, *w*²¹, թե՞ երկբարբառի ոչ վանկարար տարրն ու տվյալ կիսաձայնն արտահայտվում են միևնույն գրանշանով (արաբերենի ուղղագրական սկզբունքին համապատասխան), ինչպես՝ *aj/ay*, *au/aw* և *ǰ/y*, *ǰ/w*²², բոլոր հետազոտողներն ընդունում են, որ արաբերենում բառամիջում՝ բաղաձայնից առաջ, և բառավերջում *aj/aj/ay* և *au/au/aw* հնչյունակապակցութիւնները հնչյունական-արտասանական տեսանկյունից երկբարբառներ են ներկայացնում:

Եվ եթե նկատի ունենանք, որ եբրայերենում և եթովպերենում նույնպես բաց վանկում, այդ թվում՝ բառամիջում՝ մեկ բաղաձայնից առաջ, սեմ. **aj* և **au* հնչյունակապակցութիւնները *aj > ē, au > ō* պարզեցման են ենթարկվել և, ըստ այդմ, ակնհայտորեն երկբարբառային արժեք են ունեցել²³, ապա սեմական լեզուների տվյալների վերը կատարված քննութեան հիման վրա կարող ենք որոշ ընդհանուր հետևություններ անել.

1) ընդ. սեմ. **aj* և **au* հնչյունակապակցութիւնները սեմական մի շարք լեզուներում բառամիջում՝ բաղաձայնից առաջ, ակնհայտորեն ձայնավոր + բաղաձայն կապակցութիւններ են եղել՝ *aj(ay)*, *au(aw)*. ընդ որում, վանկավերջի երկբաղաձայնային կապակցութիւնը վերացնելու միտումով պայմանավորված՝ կամ *ǰ(y)*, *ǰ(w)* կիսաձայնների և հաջորդող բաղաձայնի միջև մի օժանդակ ձայնավոր է ավելացել (օրինակ, եբրայերենում շեշտակիր փակ վանկում), կամ էլ *ǰ(y)*, *ǰ(w)* կիսաձայնները վերածվել են ոչ վանկարար սուղ *i* և *u* ձայնավորների ու նախորդող *a* ձայնավորի հետ

²⁰ *Sb' u* E. Schulz, G. Krahl, W. Reuschel. Նշվ. աշխ., էջ 2 A₁.

²¹ *Sb' u* R. Armez., Նշվ. աշխ., էջ 8, 12:

²² *Sb' u* Б. М. Гр а н д е. Նշվ. աշխ., էջ 99, E. Schulz, G. Krahl, W. Reuschel. Նշվ. աշխ., էջ 1-2, 4:

²³ *Sb' u* C. Brockelmann. Grundriss..., S. 191-192; Б. М. Гр а н д е. Նշվ. աշխ., էջ 99-100, 362, 403:

կազմել ai և au երկբարբառներ՝ $ai > \bar{e}$ և $au > \bar{o}$ հետագա պարզեցմամբ (օրինակ, ասորերենում փակ վանկում):

2) Իսկ սեմական այլ լեզուներում (արաբերենում, եթովպերենում և այլն) բառամիջում՝ բաղաձայնից առաջ, սեմ. $*aj$ և $*au$ Հնչյունակապակցությունների հանդես դալը ai և au երկբարբառների Հնչյունական արժեքով (այսինքն՝ $\lambda(y)$ և $\mu(w)$ կիսաձայնների դրսևորվելը որպես ոչ վանկարար սուղ i և u ձայնավորներ) պայմանավորված չի եղել վանկավերջի երկբաղաձայնային կապակցությունը վերացնելու պահանջով, եթե հաջվի առնենք, որ ai և au երկբարբառային արտասանությունը կամ տվյալ երկբարբառների հետագա պարզեցումը ($ai > \bar{e}$ և $au > \bar{o}$) նկատելի են թե՛ բաց և թե՛ փակ վանկերում:

3) Այդ առումով ուշագրավ է, որ եբրայերենում նշված երկու միտումներն էլ գործել են (իհարկե, Հնչյունական տարբեր պայմաններում). շեշտակիր փակ վանկում aj -ը և au -ը դրսևորվել են որպես ձայնավոր + բաղաձայն կապակցություններ, ուստի λ , μ -ի և հաջորդող բաղաձայնի միջև օժանդակ ձայնավոր է ավելացել, մինչդեռ շեշտակիր բաց վանկում, այդ թվում՝ բառամիջում՝ մեկ բաղաձայնից առաջ, ինչպես նաև անշեշտ բաց և փակ վանկերում aj -ը և au -ը երկբարբառային արժեք են ունեցել՝ ai և au , հետևաբար $ai > \bar{e}$, $au > \bar{o}$ պարզեցման են ենթարկվել:

4) Արդ, ցեղակից լեզուների վերը դիտարկված տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ սեմական նախկին y/λ և w/μ բաղաձայնները երկբարբառի ոչ վանկարար տարրի են վերածվել սեմական միասնության քայքայումից հետո: Իհարկե, կարելի էր մտածել նաև, որ ai և au երկհնչույթային երկբարբառները ձևավորվել են դեռևս սեմական միասնության շրջանում և որպես այդպիսին ժառանգվել սեմական որոշ լեզուների կողմից: Մինչդեռ ցեղակից մյուս լեզուներում դրանք նախ վերածվել են ձայնավոր + բաղաձայն (այն է՝ y/λ , w/μ կիսաձայն) կապակցությունների, իսկ ավելի ուշ կրկին գործել է հակադարձ միտումը, մասնավորապես եթե հաջվի առնենք, որ նախնական $*aj$ և $*au$ Հնչյունակապակցությունները սեմական որոշ լեզուներում (արաբերենում, եթովպերենում և այլն) երկբարբառային հնարավոր բոլոր դիրքերում (այն է՝ բառամիջում՝ բաղաձայնից առաջ և բառավերջում) վկայված են միայն երկբարբառային արժեքով՝ հետագա մենաբարբառացման միտումով: Այնուամենայնիվ, մեզ ավելի հավանական է թվում, որ նախնական $*aj/ay$ և $*au/aw$ Հնչյունակապակցությունները ai և au երկբարբառների են վերածվել սեմական միասնության քայքայումից հետո: Հետևաբար, սեմական որոշ լեզուներում (ասորերենում, եբրայերենում և այլն) երկբարբառային դիրքերում վկայված $*aj/ay$, $*au/aw$ ձայնավոր + բաղաձայն կապակցությունները, մասնային հավանականությամբ, ժառանգվել են սեմական նախալեզվից:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից հատկապես կարևոր են սեմական լեզուների վերը դիտարկված այն օրինակները, որոնցում նախնական $*aj/ay$ և $*au/aw$ Հնչյունակապակցություններից ai և au երկբարբառների առաջացումը պայմանավորված չի եղել վանկավերջի երկբաղաձայնային

կապակցութիւնը վերացնելու պահանջով. ըստ էութեան, դրանց դեպքում գործել է նույն տարածամանակյա հնչյունական միտումը, ինչ հնդեվրոպական երկբարբառների առաջացման ժամանակ: Բանն այն է, որ տիպաբանորեն բառամիջում՝ ձայնավորի ու բաղաձայնի միջև, թե՛ երկբարբառի ոչ վանկարար Ա, ի ձայնավորները, թե՛ Վ, Մ կիսաձայնները, այլև շրթնատամնային Վ բաղաձայնը (նախնական կամ այլ հնչյուններից առաջացած) գտնվում են հնչյունական անկայուն դիրքում. լեզվի պատմական զարգացման ընթացքում մի դեպքում նախորդող ձայնավորի ազդեցութեամբ տիրապետող է դառնում ձայնավորային արտասանութիւնը, որի հետևանքով նշված բաղաձայնները վերածվում են երկբարբառի ոչ վանկարար Ա և ի ձայնավորների, իսկ մեկ այլ դեպքում հաջորդող բաղաձայնի ազդեցութեամբ երկբարբառի ոչ վանկարար Ա և ի ձայնավորները բաղաձայն դառնալու միտում են ցուցաբերում: Ընդ որում, լեզուների պատմական զարգացման մեջ նախկին ձայնավոր + բաղաձայն կապակցութիւններից երկբարբառների առաջացումն ավելի հաճախ է տեղի ունենում²⁴: Ի դեպ, հայերենի նախադրային շրջանում նույնպես (թերևս, նաև հին հայերենում) բառամիջում՝ բաղաձայնից առաջ, գործել է նախկին ձայնավոր + բաղաձայն կապակցութիւններից երկբարբառների առաջացման միտումը: Բայց հատկանշական է, որ հայերենի հետագա զարգացման ընթացքում այդ միտումը կանգ է առել և այլևս չի գործել: Այդ առումով բացառութիւն են կազմում լեհահայ բարբառի հաւնէլու [haunelʲ] (< հաւանիլ), հեւք [hieukh], հէւքեր [heukher] և նմանատիպ մի քանի այլ ձևերում հին հայերենի ձայնավոր + բաղաձայն կապակցութիւններից երկրորդաբար առաջացած երկբարբառները²⁵:

Արդ, կարծում ենք՝ հնդեվրոպական երկբարբառները և սեմական լեզուներում վկայված երկբարբառների մի մասը ևս նշված տարածամանակյա միտումի արդյունք են:

Այսպիսով, հնդեվրոպական և սեմական երկբարբառների վերը կատարված քննութիւնը մեզ բերում է հետևյալ եզրակացութեան. թե՛ հնդեվրոպական և թե՛ սեմական երկբարբառներն առաջացել են նախկին ձայնավոր + Վ/Մ, Վ/Վ բաղաձայն կապակցութիւններից: Ընդ որում, սեմական լեզուներում նշված հնչյունական զարգացումը մասամբ պայմանավորված է եղել վանկավերջի երկբաղաձայնային կապակցութիւնը վերացնելու պահանջով, մինչդեռ այլ դեպքերում այն ակնհայտորեն անկախ է եղել վանկակազմութեան օրինաչափութիւններից, եթե նկատի ունենանք, որ ձի և ձս երկբարբառները կամ դրանց հետագա պարզեցման ենթարկված տարբերակները (ձի > Ե և ձս > Ծ) առկա են թե՛ բաց և թե՛ փակ վանկերում: Վերջիններս առաջացել են տարածամանակյա նույն միտումի համաձայն, ինչ հնդեվրոպական երկբարբառները: Իհարկե, հնդեվրոպական երկբարբառների առաջացման հարցում նույնպես վանկակազմութեան օրինաչափութիւնները որոշակի դեր են խաղացել, բայց դրանք սեմականից միանգա-

²⁴ Տե՛ս Ա. Ավետյան, Վ/Մ/Ու-ի հնչյունական արժեքը և հնչյունային կարգավիճակը դասական հայերենում, Երևան, 2012, էջ 83–88:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 113–114, 65–69:

մայն տարբեր են եղել. հ.-ե. **u* և **ɜ* կիսաձայնները բառամիջում՝ ձայնավորի ու բաղաձայնի միջև, որպես երկբարբառի ոչ վանկարար տարր դրսևորվել են միայն այն դեպքում, եթե կիսաձայնին հաջորդելիս է եղել հ.-ե. որևէ բուն բաղաձայն կամ ձայնորդ + ձայնավոր կապակցություն, այսինքն՝ եթե հաջորդող բաղաձայն հնչյունի՝ վանկարար արժեք ձեռք բերելու հնարավորությունը բացառված է եղել: Սակայն, ի տարբերություն սեմականի՝ վանկավերջի երկբաղաձայնային կապակցությունը վերացնելու միտումը հնդեվրոպականին բնորոշ չի եղել և, ըստ այդմ, հնդեվրոպական երկբարբառների առաջացմանը որևէ կերպ չի նպաստել:

ДИАХРОНИЧЕСКО-ТИПОЛОГИЧЕСКОЕ РАССМОТРЕНИЕ
ИНДОЕВРОПЕЙСКИХ И СЕМИТСКИХ ДИФТОНГОВ

САРГИС АВЕТЯН

Резюме

Диахроническо-типологическое рассмотрение индоевропейских и семитских дифтонгов приводит к выводу, что они возникли из прежних комплексов гласный + *i/y*, *u/w*. Однако семитские дифтонги, по всей вероятности, появились после распада общесемитского праязыка, в каждом языке самостоятельно, если иметь в виду, что фонетические позиции, в которых встречаются дифтонги, в родственных языках достаточно своеобразны. Более того, появление дифтонгов в семитских языках частично объясняется тенденцией устранять слогоконечные консонантические комплексы, между тем в других случаях оно обусловлено следующей диахронической тенденцией: как дифтонгические глайды *i*, *u*, так и согласные *i/y*, *u/w* проявляют фонетическую нестабильность, и соответственно, две противоположные тенденции обычно действуют в историческом развитии языков: с одной стороны, дифтонгические глайды *i*, *u* превращаются в согласные *i/y*, *u/w*, а с другой стороны, консонантические варианты вокализируются, образуя дифтонги с предшествующим гласным. Притом последнее развитие является типологически более обычным. Именно эта тенденция обусловила появление индоевропейских, а частично и семитских дифтонгов.

DIACHRONIC-TYPOLOGICAL EXAMINATION
OF INDO-EUROPEAN AND SEMITIC DIPHTHONGS

SARGIS AVETYAN

Summary

The diachronic-typological examination of Indo-European and Semitic diphthongs makes it possible to conclude that they developed from earlier vowel plus *i/y*, *u/w* sequences.

However, it seems likely that Semitic diphthongs appeared after the disintegration of the protolanguage, if we take into consideration certain peculiarities of Semitic diphthongs, namely different phonetic conditions of their occurrences in the descendent languages. Moreover, the rise of diphthongs in Semitic languages is partly accounted for by the tendency to avoid consonant clusters in syllable final position, whereas otherwise Semitic diphthongs are due to the following diachronic tendency: both the diphthongal glides *i*, *u* and the consonants *j*/*y*, *w*/*w* medially between a vowel and a consonant show phonetic instability, and accordingly, two opposite tendencies usually operate in the historical development of languages: on the one hand, the diphthongal glides *i* and *u* tend to turn into consonants *j*/*y* and *w*/*w*, respectively, on the other hand, the consonant variants display tendency toward developing into diphthongal glides. Incidentally, the latter development is typologically more frequent. It is also responsible for the appearance of part of diphthongs in Semitic languages and of all the Indo-European diphthongs.